դնել 'ի գործադրութեան, եւ զգուշանալ 'ի հակառակէն և զընդդէմն գործելոյ, որոյ վասն գրեցաւ Կայսերական հրովարտակս, 'ի հասանիլ սորա եւ այլն. 'ի ١٥ Շէվալ ամսոյ. ١٢٢٨։

Յետ ընթեռնլոյ զհրովարտակն՝ եհարց Դատաւորն ցՅոյնս. ո՞ւր է հիւսիսային դուռն Այրին և բանալի նորին. նոքա ցուցին զայն, բայց զբանալին ոչ. դարձեալ ասէ՝ 'ի հրովարտակին դուռն և բանալի նորին գրի եւ Այրն բաժանորդ երկուց ազգաց, եւ դուք տիրեալ էք երից դրանց եկեղեցւոյն եւ բանալեաց նոցին, Հայք ուստի՞ մոցեն եւ ելցեն յԱյրն. զի ըստ օրինի պարտ է ցուցանել նոցա ճանապարհ. վասն որոյ տուք զմի բանալի հիւսիսային դրան եւ միւսն մնասցէ առ ձեզ։ Հայք ոչ առին յանձն, այլ խնդրէին զայն դուռ միայն սեփհականել ինքեանց. բայց Դատաւորն լռեցոյց զնոսա, և նոքա դարձեալ պնդէին, թէ եկեղեցին ոչ է սեփհական Յունաց. այլ գիւղին Բեթղեհէմի եւ միջնորմն այն նորասահման՝ սակս անկարգութեան Ֆէլլահէց, և չիք յիշատակութիւն նորին 'ի հրովարտակս երկուց ազգաց. կամ պարտ է բառնալ զայն և կամ զդուռն սեփհականել Հայոց։ Դատաւորն ոչ մատուցեալ ունկն բանից նոցա, ասէ ցՅոյնս բերել զբանալիս դրան, և նոքա ասեն՝ մի է բանալի նորին, և յարտաքուստ չունի տեղի բանալւոյ։ Հրամայեաց Դատաւորն բառնալ զայն. Յոյնք ոչ ունէին զայլ փականս, այլ Հայք յառաջագոյն պատրաստեալ էին զայն և հիւսն, քակեցին զհինն և բեւեռեցին զնորն երկու բանալեօք, եւ բացին յարտաքուստ տեղի բանալոյ և փակելոյ, եւ բերեալ զերկոսին բանալիսն եդին առաջի Դատաւորին. և նորա առեալ զմին ետ ցփոխանորդն Յունաց եւ զմիւսն ցփոխանորդն Հայոց Ստեփան եպիսկոպոս, պատուիրելով վարիլ իբրեւ եղբայր և օրհնել զԱրքայ։ Եհաս ծամ ճաշելոյ՝ յետս կացին Յոյնք. այլ Հայք պատրաստեալ էին զամենայն ինչ։

Զկնի կերակրոյ մինչ չրջէին 'ի սիւնազարդ գաւթի եկեղեցւոյն, մատուցեալ Հայք առ Դատաւորն ասեն վասն փայտեայ միջնադրան, կամ խսպառ բառնալ զփականս նորա, և կամ տալ զմի բանալի ըստ Յունաց. զի 'ի փակել